II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:

*ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Հաստատության **կառավարման համակարգն** ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ **մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ**:*

Վերլուծենք կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը, հիմնավորենք, թե ինչքանով է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը և որքանով է այն հասանելի անձնակազմին:

ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրության և մասնաճյուղի կանոնադրության համապատասխան, ինքնակառավարման սկզբունքի հիման վրա, մասնաճյուղի խորհրդի, գիտական խորհրդի և տնօրենության գործառույթների իրականացմամբ, ինչպես նաև կարևորագույն հարցերի լուծման ժամանակ կոլեկտիվին ներգրավելու միջոցով, որն ամրագրված է համապատասխան կարգերով:

Կառավարման համակարգը համապատասխանեցված է մասնաճյուղի ռազմավարական ծրագրի նպատակներին և խնդիրներին: Բոլոր խնդիրների կառավարումը բաշխված է համապատասխան ստորաբաժանումների միջև, որոնց նպատակն է բարձրացնել վարչական ծառայությունների արդյունավետությունը, բարելավելով կառավարման համակարգի տեղեկատվությունը, ապահովելով տվյալների բազաների փոխկապակցվածությունը և ստորաբաժանումների համագործակցությունը:

Մասնաճյուղի ուսումնական և գիտական գործունեությունները համակարգող կառավարման մարմինը մասնաճյուղի **գիտական խորհուրդն է,** որի լիազորությունների ժամկետը 5 տարի է և գործում է համաձայն մասնաճյուղի կանոնադրության, իր կանոնակարգի և աշխատակարգի:

Մասնաճյուղի գիտխորհրդին կից գործում են մշտական և ժամանակավոր **հանձնաժողովներ,** որոնց գործունեությունը կարգավորվում է մասնաճյուղի կանոնադրությամբ, գիտխորհրդի և համապատասխան կանոնակարերգով: Կարևորություն ներկայացնող յուրաքանչյուր հարց մինչ գիտխորհուրդ ներկայացնելը նախապես քննարկվում է համապատասխան հանձնաժողովում և միայն դրանից հետո ներառվում գիտխորհրդի օրակարգում:

Մասնաճյուղի ընթացիկ գործունեության ղեկավարումը, մասնաճյուղի կանոնադրությանը համապատասխան և իր իրավասության սահմաններում, իրականացնում է **տնօրենը**:

Մասնաճյուղում առկա է տնօրենին կից խորհրդակցական մարմին՝ **մասնաճյուղի տնօրենությունը**, որը մասնաճյուղի կանոնադրությանը համաձայն և իր լիազորությունների շրջանակներում, քննարկում է մասնաճյուղի ընթացիկ գործունեությանը վերաբերող բոլոր հարցերը, գիտխորհրդի որոշումների կատարման ընթացքը:

Մասնաճյուղի **ՈՒսանողական խորհուրդը** (ՈՒԽ) ուսանողական ինքնակառավարման մարմին է և իր ներկայացուցիչներն ունի գիտխորհրդում, տնօրենությունում և ֆակուլտետների խորհուրդներում: Ուսանողական խորհրդի լիազորությունները սահմանված են թե՛ մասնաճյուղի կանոնադրությամբ և թե՛ ՈՒԽ-ի կանոնադրությամբ: Այն Մասնաճյուղի ուսանողներին միավորող, նրանց շահերը պաշտպանող և կրթական կարիքները վերհանող մարմին է:

Ֆակուլտետը Մասնաճյուղի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործընթացը կազմակերպող հիմնական ստորաբաժանումն է, որն իրականացնում է մասնագետների պատրաստումը մեկից ավելի հարակից մասնագիտությունների գծով: Ֆակուլտետների կառավարման կարգը սահմանված է ԵՊՀ, Մասնաճյուղի և ֆակուլտետի կանոնադրություններով: Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը **ֆակուլտետի խորհուրդն է, որի նախագահը ֆակուլտետի դեկանն է:** Ֆակուլտետների ստորաբաժանումները՝ ամբիոններ, լաբորատորիաներ և այլն գործում և կառավարվում են Մասնաճյուղի, ֆակուլտետների և իրենց կանոնադրություններին համապատասխան:

Ամբիոնը Մասնաճյուղի կամ ֆակուլտետի ուսումնական և գիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը, միավորելով մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմը, կազմակերպում է որոշակի մասնագիտության (մասնագիտացման) կամ ուսումնական պլանի որոշակի մասի ուսուցումը և համապատասխան ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործընթացը: Ամբիոնը **ղեկավարում է ամբիոնի վարիչը:**

Մասնաճյուղի ուսումնամեթոդական գործընթացների, ինչպես նաև գիտահետազոտական, ֆինանսական և տնտեսական գործունեության վարչարարությունն ու կառավարումն իրականացվում է **վարչությունների և դրանց կազմում գործող բաժինների** միջոցով:

Մասնաճյուղն ունի իր առաքելությունն ու ռազմավարական ծրագրի նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսները, որի պատկերը վերջին հինգ տարիներին ներկայացված է մասնաճյուղի **2009-15թթ.** գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներում **/ԳԱՑ.** ***Ցուցանիշ 3.1/:*** Ըստ այդ տվյալների ուսանողների թվի նվազման հետ նվազել է աշխատողների և ուսանող/աշխատող հարաբերակցությունը, ուսանողների թվի աճի հետ՝ աճել է, և ցուցանիշը 2014/15–ին հասել է 7,0-ի:

Վերջին երկու տարիներին դասախոսական կազմ/ուսումնաօժանդակ և վարչական կազմ հարաբերակցությունը փոքր-ինչ աճել է՝ պայմանավորված դասախոսական կազմի ավելացմամբ **/ԳԱՑ. Ցուցանիշ 3.2/:** Աշխատողների հոսունությունը պայմանավորված է ժամավճարային հիմունքներով դասավանդողների բաժնեմասով: 2013-14 ուստարում աշխատողների հոսունությունը զգալիորեն նվազել էր, սակայն 2014-15-ին նորից աճել է, պայմանավորված մասնագիտական կրթաբլոկի դասընթացների առկայությամբ **/ԳԱՑ. Ցուցանիշ 3.3 /:**

Հաստատության եկամուտները վճարովի ուսուցման համակարգից աճել են 4,7%-ով, իսկ պետական բյուջեից՝ մի փոքր նվազել, ընդհանուր եկամուտներն աճել են 4,3%-ով:

Մասնաճյուղի ֆինանսական և նյութական ռեսուրսներն ստեղծվում են վճարովի ուսուցման ծառայությունից, պետական բյուջեից և այլ աղբյուրներից եկող եկամուտներից: 2015 թվին հաստատության ընդհանուր եկամուտներն աճել են 4,3%-ով **/ԳԱՑ.Ցուցանիշ 3.4./**: Այս թիվը միտում ունի աճելու՝ պայմանավորված ուսումնական և մեկ ուսանողին ընկնող ծախսերի ընդհանուր ծավալով: 2010թ.-ից սկսած մեկ ուսանողին ընկնող ծախսերի ծավալը աճել է **/ԳԱՑ. Ցուցանիշ 3.5 /**:

Տարեվերջից տեղափոխվող մնացորդն աճել է 24%-ով, որն ավելացնում է ֆինանսական կայունության ֆոնդը և կրճատում ռիսկային գործոնների առաջացումը **/ԳԱՑ. Յուցանիշ 3.6 /**:

Ընդհանուր տարեկան ծախսերում ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռն ավելացել է 1,9%-ով, որը պայմանավորված է պայմանների բարելավմամբ **/ԳԱՑ. Յուցանիշ 3.9 /**:

Յուրաքանչյուր տարվա ընդհանուր ծախսերի ավելացմանը զուգահեռ աճել են նաև ուսումնական ծախսերը. արդյունքում մեկ ուսանողին ընկնող ուսումնական ծախսերն ավելանում են, որոնք լսարանների, լաբորատորիաների, ուսանողական մասնաշենքերի, տեխնիկական հագեցվածության, հյուրանոցի վրա կատարված ծախսերն են՝ գումարած դասախոսների աշխատավարձերը և սոցիատկացումները **/ԳԱՑ. Յուցանիշ 3.8 /:**

Իր առաքելությունը և հիմնական ռազմավարական նպատակները հեռանկարում առավել արդյունավետ կերպով իրականացնելու համար ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի ստորաբաժանումների ցանկում պարբերաբար կառուցվածքային փոփոխություններ են կատարվում. ավելացվում են լսարանները, կաբինետներն ու լաբորատորիաները, դասախոսական կազմը համալրվում է նոր, որակյալ կադրերով. «Համալրել և բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման համալսարանական չափանիշներին համապատասխան»՝ սա ռազմավարական ծրագրի պահանջն է:

Այս գործընթացներից բխող անվանափոխումները, ենթակառուցվածքների տարանջատումը, նոր բաժինների ստեղծումը արդյունավետ փոփոխություններ են, որոնք

- ավելի հստակ ու կոնկրետ են դարձնում բաժինների գործունեությունը,
- թեթևացնում են աշխատակիցների ծանրաբեռնվածությունը և ապակենտրոնացնում նրանց պատասխանատվությունը,
- նպաստում են բոլոր օղակների գործունեությունը ավելի կանոնակարգված ու հետևողական ձևով իրականացնելուն ***/Հավելված 2.1. ԵՊՀ ԻՄ կառուցվածքը/:***

Արդեն իսկ ակնհայտ է կրթօջախի առկա և հեռակա համակարգում մարզի դպրոցների շրջանավարտներին առավելագույնս ներգրավելու գործընթացը, որն իրականացնելու համար տարանջատվել և առանձին բաժին է դարձել **մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժինը**:

Հասարակության հետ մասնաճյուղի կապերն ընդլայնելու և աշխուժացնելու համար ստեղծվել է **"Հասարակության հետ կապերի և մամուլի պատասխանատու"** հաստիք:

Մասնաճյուղում հետևողականորեն իրականացվում են աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, խրախուսման ու տույժի կիրառման քաղաքականությունն ու ընթացակարգերը **/ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոններ/:**

Հրամանով հաստատված կառուցվածքային բոլոր փոփոխությունները, հրամաններն ու որոշումները էլեկտրոնային տարբերակով ուղարկվում են ֆակուլտետներ, ամբիոններ, տեղադրվում ԵՊՀ-ի և Մասնաճյուղի կայքերում, գրավոր տեսքով փակցվում ֆակուլտետների՝ հրամանների ու հայտարարությունների ցուցատախտակին՝ դառնալով հասանելի դասախոսական ու վարչական կազմին և ուսանողությանը:

Կառուցվածքային բոլոր ստորաբաժանումները մասնաճյուղում տեղաբաշխված են հնարավորինս օպտիմալ ձևով ***/Հավելված 2.2.Կազմակերպական կառուցվածքում ներգրավված մարմինների տեղաբաշխման քարտեզ/:***

Վերլուծությունը ցույց է տալիս, որ Մասնաճյուղի կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Չնայած մասնաճյուղը կառավարման և վարչարարության ուղղությամբ ընդհանուր առմամբ հասել է որոշ ձեռքբերումների, սակայն կան գործընթացներ, որոնք կամ բացակայում են, կամ դեռևս անկատար են, բայց որակի ապահովման հետևողական պահանջով անհրաժեշտաբար մշակվում են և կյանքի կոչվում մասնաճյուղի ռազմավարական ծրագրով նախատեսված կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում:

Այսպես, բացակայում են.

ա/գործընթացների մշտադիտարկման քաղաքականության և ընթացակարգերի հստակ մեխանիզմները,

բ/ բարելավումների պլանավորման և նրանց տեղեկատվության վերաբերյալ հիմքերը,

գ/ որակի նոր չափորոշիչներին դեռևս ոչ լիարժեքորեն հասու լինելն ու կանոնակարգերին չտիրապետելը,

դ/փաստաթղթերի ստեղծման ավանդական գործընթացներով առաջնորդվելը,

ե/գնահատման և վերանայման, հետադարձ կապի ապահովման մեխանիզմները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. *ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:*

Վերլուծենք որոշում կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության արդյունավետությունը:

Դասախոսների և ուսանողների մասնակցությունն ապահովող կարգերը: ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղն իր առաքելությամբ միտված է դառնալու ուսանողակենտրոն միջավայր, որտեղ դասախոսները և ուսանողները հնարավորություն ունեն ոչ միայն զարգացնելու իրենց մասնագիտական կարողություններն ու մանկավարժական հմտությունները, իսկ ուսանողները՝ որպես ներքին շահակիցներ, որակյալ կրթություն ստանալու և բավարարելու իրենց ներկա և հեռանկարային պահանջմունքները, այլև ներգրավվելու կառավարման համակարգում և մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը: Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության 25 տոկոս ներկայությունը գիտխորհրդում, տնօրենության և ֆակուլտետների խորհուրդների կազմում, դա ամրագրված է մասնաճյուղում առկա կառավարման համակարգում դասախոսների և ուսանողների մասնակցությունն ապահովող փաստաթղթերում /տես՝ ***ԳԽ կազմը, ֆակուլտետների խորհուրդների կազմերը, Որակի ապահովման և վերահսկման հանձնաժողովի կազմը***/:

Մասնաճյուղի ուսանողության ինքնակառավարման և նրա շահերը ներկայացնող մարմինը ուսանողական խորհուրդն է, որը

ա/ ապահովում է ուսանողների մասնակցությունը մասնաճյուղի կառավարմանը,

բ/մասնաճյուղի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողներին առնչվող հարցեր:

Ֆակուլտետների ուսանողական խորհուրդներն ու ուսանողները, ամբիոնների դասախոսները կարող են ներկայացնել իրենց դիտողությունները, առաջարկությունները, նկատառումները, որոնք վերաբերում են

- քննական կանոնակարգերին,
- ժամանակացույցներին,
- վճարովի-անվճար ուսուցման համակարգերի փոփոխությանը,
- թեստերի գնահատման կանոնակարգերին,

- ուսանողներին խրախուսելու և տույժի ենթարկելու կանոնակարգերի քննարկմանը,
- կրթաթոշակների նշանակմանը,
- պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակների գնահատմանը:

Կառավարման մարմինների որոշումները հրապարակվում են ի լուր և ի տես հաստատության դասախոսական կազմի և ուսանողության. բոլոր հրամանները, հրահանգները, կանոնադրական փոփոխությունները, որոշումները էլեկտրոնային տարբերակով ուղարկվում են ֆակուլտետներ և ամբիոններ:

Գիտխորհրդի նիստերում քննարկվել և լուծվել են ուսանողների կողմից բարձրացված այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝

ա/ավարտական աշխատանքների թեմաների արդիականության,

բ/ կիրառական արվեստի ֆակուլտետում մետաղի գեղարվեստական մշակման մասնագիտությունը նոր՝ քանդակի և ծեփագործության մասնագիտությամբ փոխարինելու հարցերը **/11.06.2010թ., արձ. թիվ 3**/,

գ/ էլեկտրոնային գրադարանի ցանցի ստեղծումը, դասախոսությունները էլեկտրոնային տարբերակով ուսանողներին տրամադրելու, «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության շրջանավարտներին ուսուցչի որակավորում տալու հարցերը **/09.09. 2011, արձ. թիվ 9/,**

դ/գիտական հոդվածների «Ակունք» ժողովածուում ուսանողների գիտական հոդվածները տպագրելու,

ե/ինչպես նաև բնագիտական ֆակուլտետի մասնագիտությունները փոխարինելու «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Էկոլոգիական քիմիա» մասնագիտություններով **/17.09.2012, արձ. թիվ 4/:**

Որոշումներ կայացնելու գործընթացում ուսումնառողների մասնակցությունը երաշխավորող քաղաքականության հիմքերից են նաև՝

- Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի ուսանողների բողոքների քննարկման կարգը **/28.02.2012թ., արձ. թիվ 1**/,
- ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում քննությունների և ստուգարքների գնահատման և բողոքարկման վերաբերյալ կանոնակարգը **/28. 12. 2009, արձ.թիվ 4/,**
- ԵՊՀ-ի ԻՄ-ի ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների վերաբերյալ հարցման կարգ **/28. 12. 2009թ.,** հիմք՝ ՀՀ կրթության մասին օրենքի 28-րդ հոդված, 4-րդ կետ և հավելված՝ԵՊՀ-ի ԻՄ-ի կանոնադրություն/:

Այս կարգերը ներառում են

ա/ բանավոր և գրավոր քննությունների բողոքարկումը,

գ/ ամփոփիչ ատեստավորման արդյունքը,

դ/ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման վերաբերյալ բողոքարկումները, որոնց ընթացք են տրվում բողոքների քննարկման կարգի՝ գիտխորհրդում հաստատված ընթացակարգերի համաձայն:

Մասնաճյուղի ուսումնակրթական գործընթացում ոսանողներին ներգրավելու մեխանիզմերից մեկն էլ նրանց կարծիքը հաշվի առնելն է՝ առկա թերություններն ու բացթողումները վերհանելու, դրանք վերացնելու և կրթության որակը առավել բարձրացնելու նպատակով կիրառվող ընթացակարգերում: Հաստատության պրոֆեսորադասախոսական

կազմի մասնագիտական և մանկավարժական որակները գնահատելիս կարևորվում է նաև ուսանողների կարծիքը: Այս գործընթացը նույնպես խոսում է մասնաճյուղի ուսանողակենտրոն լինելու մասին: Ուսանողական հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնում, այնուհետև ֆակուլտետի նիստում, ապա մշակվում են համապատասխան մեխանիզմներ՝ դասախոսի դասավանդման որակի, մեթոդների բարելավման ուղղությամբ /դասալսումներ, ընթացիկ ստուգումների ու քննությունների արդյունքների վերլուծություն՝ **հիմքերը ամբիոնների նիստերի արձանագրություններն են/:**

Մասնաճյուղի կառավարման համակարգի ուսանողամետ քաղաքականությունը, որոշում կայացնելու գործընթացում ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունն ապահովող արդյունավետ գործընթացները նախ՝

- բացահայտում են դասախոսների ու ուսանողների կարիքները,
- զարգացնում են ուսանողների ինքնուրույնությունը,
- ուսանողների մեջ զարգացնում են նախաձեռնողական և կառավարման հմտություններ,
- բարելավում են կառավարման համակարգը,
- ապահովում ՄՈՒՀ-ի գործունեության հրապարակայնությունը,
- թափանցիկությունը,
- օպտիմալացնում վարչարարությունը:

Որոշում կայացնելու գործընթացներում ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունը երաշխավորող մշակված քաղաքականությունն ու ընթացակարգերը նոր պահանջներին համապատասխան փոփոխությունների են ենթարկվում. «Բարձրացնել մասնաճյուղի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը՝ ուղղորդելով գործընթացը դեպի կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը» (**ՌԾ**):

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. *ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:*

Վերլուծենք պլանավորման և վերջիններիս իրականացման արդյունավետությունը, հիմնավորենք, թե ինչքանով է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը:

Իջևանի մասնաճյուղի կառավարման գործընթացն սկսվում է պլանավորմամբ, որը դրսևորվում է երկու մակարդակով՝ **ռազմավարական և ուսումնագիտական**, որոնք ունեն իրականացման իրենց մեխանիզմները:

Իջևանի մասնաճյուղի գործողությունների ծրագրերի հիմքում ընկած է 2011-2015թ.թ. ռազմավարական ծրագիրը /ՌԾ/ և դրա իրականացման ժամանակացույցը: Իրականացման ժամանակացույցը նույնպես կազմված է հինգ տարվա համար և հանդիսանում է երկարաժամկետ պլան: Միջնաժամկետ են հանդիսանում երեք տարի ժամկետի համար նախատեսված գործողությունների պլանները, որոնք հիմնված են ՌԾ ժամանակացույցի վրա: Եռամյա միջնաժամկետ պլանի իրականացման վերլուծության հիման վրա կազմվում է հաջորդ երկու տարվա գործողությունների երկու տարվա համար նախատեսված միջնաժամկետ ծրագիրը, որը ներառում է ՌԾ-ի վերջին 2 տարվա և նախորդ 3 տարիներին ինչ որ պատճառով հետաձգված գործողությունները: Կարճաժամկետ ծրագրերը կազմվում են ֆակուլտետներում

ու ամբիոններում՝ ելնելով միջնաժամկետ պլանից, ուսումնական գործընթացի ժամանակացույցից և դասախոսների զարգացման պլաններից:

Մասնաճյուղի ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանում ներկայացվում են հաստատության բազմաբնույթ նպատակներն ու խնդիրները՝ ըստ ուսումնական տարիների կիսամյակների, ապա նշվում են պատասխանատու կատարողները և կատարման ժամկետները:

Գործողությունների երկարաժամկետ ծրագրերը բխում են մասնաճյուղի կարիքներից, որոնք վերաբերում են տնտեսական ու ուսումնակրթական բոլոր հիմնահարցերին: Ահա դրանցից մի քանիսը.

- Իրականացնել կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ՝ արդի ծրագրային չափանիշներին և տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համահունչ,
- Ներդնել որակի ներքին ապահովման համակարգ՝ հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան,
- Ստեղծել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար,
- Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել մասնաճյուղի ուսումնական և գիտական լաբորատոր բազան՝ կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան,
- Կրթական ծրագրերի վերանայումն ու առարկայական ծրագրերի արդիականացումը,
- Կրթական ծրագրերի և մասնագիտությունների պետական հավատարմագրման գործընթացի կազմակերպումն ու իրականացումը:

Գործողությունների միջնաժամկետ ծրագրերը ներառում են.

- Գործունեության կարգերի և ընթացակարգերի արդիականացումը,
- Նոր կրթական ծրագրերի ներդրումը,
- Դասավանդողների որակավորման բարձրացումը,
- Ուսանողների փոխանակման և շարժունության պայմանների ապահովումը:

Գործողությունների կարճաժամկետ ծրագրերը վերաբերում են.

- Ուսումնաարտադրական պրակտիկաների անցկացման արդյունավետությանը,
- Մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների գնահատմանն ու ինքնավերլուծությանը,
- Կառուցվածքային ստորաբաժանումների ամենամյա աշխատանքների գնահատմանը:

Ուսումնական պրոցեսը կազմակերպվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցերով և դասացուցակներով: Կրթական ծրագրերը և ուսումնական պլանները մշակվում են ամբիոններում և ֆակուլտետներում, հետո քննարկվում գիտական խորհրդում: Հստակ սահմանվում են ստուգարքների ընդունման, քննաշրջանի անցկացման, պարտքերի մարման ժամկետները, ուսումնական պարապմունքների ավարտը:

Բոլոր ծրագրերի (երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ) մշտադիտարկման համար մշակվում են իրականացման ժամանակացույցեր՝ հատուկ ձևաչափերով: Ձևաչափերում հստակ ներկայացվում են գործողությունների քայլերը, պատասխանատուները, անհրաժեշտ ռեսուրսները, իրականացման ժամկետները և վերջնարդյունքները: Բոլոր պաշտոնյաները և

ստորաբաժանումները հաշվետվություններ են ներկայացնում իրենց պլանների իրականացման վերաբերյալ: Հավետվողականության համակարգը գործում է ներքևից-վերև և վերևից-ներքև ուղղություններով. դասախոսները՝ ամբիոնին, ամբիոնի վարիչները՝ ամբիոնին և ֆակուլտետին, դեկանները՝ ֆակուլտետներին և տնօրինությանը, տնօրենը՝ մասնաճյուղի և ԵՊՀ գիտական խորհուրդներին:

Ֆակուլտետների դեկանների և տնօրենի տարեկան հաշվետվությունները հասանելի են բոլոր շահակիցներին Մասնաճյուղի կայքէջում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. *ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:*

Նշենք վերջին երեք տարիներին մասնաճյուղի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների արդյունքները և դրանց արտացոլումը ռազմավարական ծրագրում:

Իր գործունեությունն իրականացնելիս ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հենվում է իր գործունեությանը վերաբերող տեղեկատվության հավաքագրման և վերլուծության վրա (ԳԱՑ, հարցումներ, վիճակագրություն), առանց որոնց չի կարող ճիշտ գնահատել իր աշխատանքի արդյունավետությունը, պարզել բացթողումները և բարելավման ուղղությամբ կատարած փոփոխությունների արդյունքները:

ԳԱՑ-ի սահմանված լրակազմի օգնությամբ կատարվում է Մասնաճյուղի գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատում: ԳԱՑ-ի միջոցով վեր են հանվում Մասնաճյուղի ձեռքբերումները և թույլ կողմերը՝ նրա հետագա զարգացումը առավել արդյունավետ կազմակերպելու համար: ԳԱՑ-ի տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս պարզել Մասնաճյուղի կառավարման և պլանավորման գործընթացների ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև բարելավելու կառավարման և պլանավորման գործընթացները:

ՈՒսուցման որակի վրա ազդող գործոնների բացահայտման նպատակով մասնաճյուղի շրջանավարտների և գործատուների շրջանում անցկացվում են հարցումներ՝ պարզելու համար նրանց բավարարվածությունը մասնաճյուղում ուսանողների ստացած գիտելիքներից և կարողություններից: Իսկ ներքին գործոնների ուսումնասիրման համար անցկացվում են հարցումներ ուսանողության և դասախոսության շրջանում՝ պարզելու համար նրանց բավարարվածությունը ուսումնական ծրագրերից, դասավանդման մեթոդներից, գրադարանային սպասարկումից, լաբորատորիաների և լսարանների վիճակից, գործող կանոնակարգերից, աշխատանքային միջավայրից: Բացի այդ՝ մասնաճյուղի ղեկավարությունը հաճախակի հանդիպումներ է ունենում ուսանողների, դասախոսների հետ՝ պարզելու կոնկրետ ժամանակահատվածում առկա խնդիրները, իրավիճակային լուծումներ տալու տվյալ պահին առկա խնդիրներին:

Ինֆորմացիայի հավաքագրման գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով տնօրենությանը կից տեղեկատվական տեխնոլոգիաների գծով խորհրդական՝ Մ. Ճաղարյանի կողմից ստեղծվել են էլեկտրոնային բազաներ: Մասնավորապես, Մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումներում գործում են կադրերի հաշվառման և մշակման տեղեկատվական համակարգ, ուսանողների վարձավճարների հաշվառման համակարգ, շրջանավարտների տվյալների հաշվառման և մշակման տվյալների բազա, ուսանողների հաճախումների, քննական արդյունքների հաշվառման և մշակման բազա, հարցումների(7 հատ) արդյունքների հաշվառման և մշակման համակարգ

Բուհի գործունեության վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝

1. Տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը,
2. Դիմորդների քանակը տվյալ ուսումնական տարում, որի հետևանքով նվազում կամ ավելանում է ֆինանսական ներհոսքը ուսման վարձավճարներից, փոփոխություններ են տեղի ունենում պրոֆեսորադասախոսական կազմում և վարչակակազմում,
3. Անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի վիճակը */ԳԱՑ. Յուցանիշ 3.4, 5, 6, 7, 8, 9, 13/,*
4. Արտաքին և ներքին շահակիցների բավարարվածության աստիճանը, որն անթաքույց արտահայտվում է երկուստեք հարցաթերթիկները լրացնելու ժամանակ,
5. Շրջանավարտների մասին արտաքին շահակիցների կարծիքները, որոնցում հստակորեն երևում են նրանց պահանջները մեր շրջանավարտների մասնագիտական կարողությունների և անձնային հատկանիշների մասին:

Արտաքին ու ներքին շահակիցների հարցման արդյունքում վեր են հանվում նրանց կարիքներն ու պահանջները, որոնք քննարկվում են համապատասխան ֆակուլտետների խորհուրդներում, գիտխորհրդի նիստերում, ՄԿՈԱ բաժնում և ընդունվում որոշումներ՝ դրանք բավարարելու համար:

Դրանք շարունակաբար ու հետևողականորեն իրականացվող ընթացակարգեր են, որոնց վերջնարդյունքը երևում է կարճաժամկետ ծրագրերում: Դրանք արտացոլված են ստորաբաժանումների հաշվետվություններում, գործատուների կարծիքների վերաբերյալ հարցաթերթիկների պատասխաններում, ուսանողների ակադեմիական առաջադամության վերաբերյալ հաշվետվություններում */ԳԱՑ. Յուցանիշ 2.14/,* մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներում*,* ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակների վերաբերյալ գնահատման հարցաթերթիկների */ԳԱՑ. Յուցանիշ 2.15/,* շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցման, պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցման, ներքին աուդիտի, մասնաճյուղից ուսանողների բավարարվածության ուսումնասիրության արդյունքներում: Պետք է նշել, որ հարցումներից մի քանիսը մինչև հիմա կամ չեն իրականացվել, կամ իրականացվել են ոչ կանոնավոր: Հետագայում նախատեսվում է հարցումներն իրականացնել կանոնավոր՝ ամենամյա պարբերականությամբ:

Որոշումների կայացման համար հարկավոր է մուտքագրել ուսանողների ակադեմիական տվյալները, առաջադիմությունը, ուսանողների վարձավճարների զեղչման հարցը և այլն: Համալսարանի վրա ազդող գործոնների ուսումնասիրման մեխանիզմ է բուհի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների/ԳԱՑ/ տվյալները, որոնցից ներկայացված են այս չափանիշում:

ՈՒնեցած ինֆորմացիայի վերլուծությունը հիմք է հանդիսանում որոշումների ընդունման և գործող կարգերի փոփոխության համար: Մասնավորապես կատարվել են բովանդակային և կառուցվածքային փոփոխություններ մասնագիտությունների կրթական ծրագրերում, գնահատման համակարգում, պրակտիկաների անցկացման ծրագրերում, առկա նյութատեխնիկական բազայի առավել արդյունավետ օգտագործման նպատակով՝ կառուվածքային փոփոխություններ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. *Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):*

Վերլուծենք որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների արդյունավետությունը՝ նշելով, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

Իջևանի մասնաճյուղի կառավարման քաղաքականությունն ու վարչարարությունը բխում է մասնաճյուղի ռազմավարական ծրագրից՝ «Ներդնել որակի ներքին ապահովման համակարգ՝ հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան» և իրականացվում է կառավարման հետևյալ սկզբունքներով

ա/ նախ վեր են հանվում կարիքները,

բ/ պլանավորվում են գործընթացներն ու արդյունքների հասանելիության ցուցիչները,

գ/ գործընթացները իրականացվում են պլանավորմանը համապատասխան,

դ/ ստուգվում, վերահսկվում և գնահատվում են ձեռքբերումները,

ե/ արդյունքների վերլուծությունից հետո աշխատանքներ են տարվում բարելավման ուղղությամբ:

Բուհի կառավարման և վարչարարության որակի ապահովման քաղաքականությունը պլանավորում և իրականացնում է հետևյալ ընթացակարգերը.

- Սահմանել վերահսկողություն ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման նկատմամբ,
- Ապահովել կրթական բոլոր ծրագրերի և որակավորումների՝ կրթության ստանդարտների և չափորոշիչների համապատասխանությունը,
- Աջակցել ուսուցման որակի բարձրացման և որակի ապահովման մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը,
- Իրականացնել ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը, օրացուցային պլանները,
- Վերահսկել ուսումնական առարկաների դասավանդումը, ուսումնական պարապմունքների կազմակերպումն ու իրականացումը,
- Հետևողականորեն իրականացնել կրթական չափորոշիչներին համապատասխան ուսանողների գիտելիքների գնահատման, առաջադիմության ընթացիկ ստուգումների, գնահատման ռեյտինգային համակարգի ներդրման, կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացները,
- Հսկողություն սահմանել ուսումնական կարգապահության պահպանման, դասահաճախումների, ուսումնական պլաններով նախատեսված առարկաների յուրացման, ընթացիկ քննությունների հանձնման, անհատական և ինքնուրույն աշխատանքների՝ ժամանակացույցերին համապատասխան կատարման վիճակի նկատմամբ,
- Ամբիոններում քննարկել կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների արդիականության, ժամանակացույցերի, պահանջվող մեթոդական ու մասնագիտական գրականության առկայության, աշխատանքների ղեկավարման, գրախոսման և գնահատման գործընթացները, հետևել կատարման ընթացքին,
- Ուսումնասիրել գործատուների կողմից շրջանավարտների մասին ներկայացված պահանջները,

- Պարբերաբար կազմակերպել դասալսումներ և քննարկել, իրականացնել դասախոսների կարողությունների, աշխատանքի որակի գնահատման, որակավորման բարձրացման և կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքներ,
- Ընդլայնել գրադարանային ֆոնդը, կիրառել ուսուցման ժամանակակից միջոցներ:
- Բարձր հիմքերի վրա դնել ուսումնաարտադրական պրակտիկաների անցկացման մեխանիզմները,
- Ուսումնասիրել ներքին և արտաքին շահակիցների կարիքները և կատարել համապատասխան ուղղորդումներ, որոշել՝ համալսարանը կրթական նպատակների իրականացման համար ունի՞ մարդկային, նյութական և ֆինանսական անհրաժեշտ ռեսուրսներ,
- Աշխատանքներ տանել կրթական ծրագրերի, դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության ուղղությամբ, որը կնպաստի ուսանողակենտրոն ուսուցմանը,
- Համալսարանի այլ կառույցների հետ միասին աշխատանքներ տանել հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների ստեղծման ուղղությամբ,
- Պայմաններ ստեղծել, որ որակի ապահովման ներքին համակարգը բավարար հիմքեր ստեղծի որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար,
- Համալսարանի այլ կառույցների հետ մեխանիզմներ մշակել ծրագրերը համեմատելու այլ բուհերի նույնանման մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ, որը կապահովի ուսանողների և դասախոսական կազմի շարժունակությունը և միջազգայնացումը, կնպաստի դասավանդման առաջավոր փորձի և մոտեցումների ներդրմանը:

Այս ընթացակարգերը նպատակաուղղված են և նպաստում են մասնաճյուղի առաքելության իրականացմանը, որը հետևողականորեն կառավարվում և վերահսկվում է :

Որակի ապահովման քաղաքականությունը արդյունավետ է, քանի որ նկատված թերությունների վերացման ուղղությամբ կատարվում են պլանավորված ու հետևողական գործընթացներ, որոնք.

- Նպաստում են որակի շարունակական բարելավմանը և հետագա զարգացմանը մասնաճյուղում,
- Բացահայտում հատուկ ուշադրության արժանի ոլորտները՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով շարունակական բարելավում ապահովելու համար,
- Ներդաշնակ դարձնում որակի ապահովման տարբեր ոլորտները և գործընթացները մասնաճյուղում,
- Բարձրացնում են կառավարման որակը,
- Նպաստում ԵՊՀ–ի Իջևանի մասնաճյուղի առաքելության իրականացմանը՝ նրա ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան,
- Կատարելագործում և եվրոպական չափանիշներին համահունչ՝արդիականացնում են կառավարման որակի գործառույթները և ընթացակարգերը, դրանց առնչվող պաշտոնական փաստաթղթերը:

Կառավարման և վարչարարության որակի ապահովման քաղաքականության սկզբունքները մասնաճյուղի առաքելությունն ու ռազմավարությունն են, պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական համակազմի որակավորումների ու կարողությունների աճը, կառավարման համակարգում նկատված թերությունների վերացումն ու որակի ապահովման բարելավումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. *ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:*

Վերլուծենք մասնաճյուղում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը:

Ռազմավարական առաջին և կարևոր նպատակի՝ բարձրորակ կրթության ապահովման արդյունավետությունը երաշխավորվում է մասնագիտական կրթական ծրագրերի պատշաճ մակարդակով, այսինքն ծրագրերի ուսումնառության ակնկալվող /վերջնական/ արդյունքների համապատասխանությամբ առաքելության հետ, համադրելիությամբ պետական կրթական չափորոշիչների և որակավորումների ազգային շրջանակի հետ: Հարցումների և տարբեր ուսումնասիրությունների միջոցով դինամիկ կերպով հետևելով երկրի և տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին /ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցման կանոնակարգ, հաստատված ԵՊՀ ԻՄ ԳԽ-ի 18.04.2015թ. նիստում/, մասնաճյուղում բարձրորակ կրթության ապահովման նպատակով ԵՊՀ-ի համապատասխան կարգերի կիրարկմամբ մշակվում և հաստատվում են համապատասխան կրթական ծրագրեր **/ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգ/,** այնուհետև իրագործվող կրթական ծրագրերի արդյունավետությունը գնահատելու նպատակով դրանք պարբերաբար ենթարկվում են մոնիթորինգի (մշտադիտարկման) **/ԵՊՀ ԻՄ մասնագիտությունների կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման կարգ, հաստատված ԳԽ–ի 12.05.2012թ-ի թիվ 2 նիստում/**: Կրթական ծրագրերի վերլուծությունն ու գնահատումն իրականացվում է հարցումների միջոցով համապատասխան տեղեկատվության հավաքագրման հիման վրա **/ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման համար հարցման կանոնակարգ, ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական գնահատման համար հարցման կանոնակարգ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության համար հարցման կանոնակարգ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկայի կազմակերպման արդյունավետության գնահատման համար հարցման կանոնակարգ,** հիմքերը հաստատված են համապատասխանաբար՝ ԵՊՀ ԻՄ ԳԽ-ի 02.09.2010թ. նիստում, ԵՊՀ ԳԽ-ի 02.09.2010թ. նիստում, ԵՊՀ ԻՄ ԳԽ–ի 18.04.2015թ. նիստում/ հետևյալ փուլերով. նախ մասնագիտացված ստորաբաժանումների կողմից՝ մասնագիտական ամբիոն, ֆակուլտետի Գիտական խորհուրդ, այնուհետև ՈՒՄՎ–ի՝ որտեղ ըստ ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման ուղենիշների **/ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներ**/ ստուգվում են մասնաճյուղում գործող բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերը, կենդանի շփման միջոցով դրանք ներկայացվում և քննարկվում ներքին ու արտաքին շահակիցների շրջանում, և այս ամենից հետո ընթացքում վեր հանված թերությունների շտկման ուղղությամբ կատարվում են անհրաժեշտ կառուցողական առաջարկներ: Հատկանշական է, որ ինչպես արտաքին շահակիցների, այնպես էլ շրջանավարտների շրջանում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում անցկացվող հարցումների **/ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցման կանոնակարգ, ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման կանոնակարգ**/ միջոցով գնահատվում են «կրթական վերջնարդյունքները», «կոմպետենցիաները», որպես մասնաճյուղի շրջանավարտների կողմից ձեռք բերված գիտելիքների, ունակությունների և

կարողությունների համախումբ: Նշված գործընթացները հնարավորություն են ընձեռում պարբերաբար արդիականացնել գործող կրթական ծրագրերի բովանդակությունը և բարելավել կրթության որակը, համապատասխանեցնելով տարածաշրջանի աշխատաշուկայի և սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, իսկ անհրաժեշտության դեպքում ծրագրել, մշակել և ներդնել նոր պահանջված մասնագիտություններ /կրթական ծրագրեր/:

Այլ գործընթացների արդյունավետության գնահատման համար մասնաճյուղում գործում են մի շարք մեխանիզմներ՝ ձևավորված և հաստատված համապատասխան կանոնակարգերի միջոցով, մասնավորապես.

- ԵՊՀ ԻՄ–ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցման կանոնակարգ /հաստատված ԵՊՀ ԻՄ ԳԽ–ի 02.09.2010թ. նիստում/,
- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ներքին շահակիցների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգ /հաստատված ԵՊՀ ԻՄ ԳԽ-ի 18.04.2015թ. նիստում/,
- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում երիտասարդ դասախոսների խրախուսման կանոնակարգ:

Վերոնշյալների մեխանիզմներով հավաքագրվում, մշակվում և վեր է լուծվում մեծածավալ տեղեկատվություն և արդյունքում հնարավորություն է ընձեռվում գնահատելու հաջողությունները, բացահայտել թերացումներն ու բացթողումները, մշակել դրանք լուծելու միջոցառումների պլան:

Մասնաճյուղում գործում է ԵՊՀ ԻՄ Գիտխորհրդին կից որակի կառավարման մշտական հնաձնաժողով /**ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կանոնակարգ**/, որն իր լիազոր ներկայացուցիչների միջոցով /Կառուցվածքային ստորաբաժանումներում որակի կառավարման հանձնաժողովի լիազոր ներկայացուցչի գործունեության կանոնակարգ/ կառուցվածքային ստորաբաժանումներում պարբերաբար կազմակերպում է որակի համակարգի լիարժեք բարելավման և ԵՊՀ ԻՄ-ում որակի համակարգի լիարժեք ներդրման հետ կապված միջոցառումներ /հետազոտություններ, մոնիթորինգ և այլն/ և ներկայացնում որակի բնագավառում կատարված գործունեության վերաբերյալ հաշվետվություն: Դրա հիման վրա մասնաճյուղում իրականացվում է ստորաբաժանումների /գրադարան, ֆակուլտետներ, ամբիոններ, լաբորատորիաներ, ուսումնական մաս, կարիերայի կենտրոն, տնօրինություն/ գործունեության վերլուծության բազմաքայլ գործընթաց /մինչ այժմ դա իրականացվել է ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությամբ/: Այդ նպատակով համապատասխան ստորաբաժանումներում հավաքագրվում են մեծածավալ քանակությամբ ռելևանտ տեղեկատվություն, դասակարգվում և վերլուծվում.

1. ՄԿՈԱ բաժնում հավաքվում, դասակարգվում /խմբավորվում/ և վեր են լուծվում ներքին և արտաքին շահակիցների առաջարկները տարբեր հարցաղրումների վերաբերյալ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում ներկայացված առաջարկներն ու դիտողությունները և այլն,
2. ֆակուլտետներում ըստ խմբերի, կուրսերի, բաժինների և ըստ ֆակուլտետի հավաքագրվում և վեր են լուծվում ուսանողների ընթացիկ, եզրափակիչ՝ կիսամյակային և տարեկան առաջադիմությունների քանակական և որակական արդյունքները, որոնց համեմատական վերլուծությունները մրցակցային հետաքրքրություն և միմյանց հետ դրական փորձ փոխանակելու ցանկություն են առաջացնում,
3. ամենամյա անց է կացվում «լավագույն ամբիոն» մրցույթը,

4. ֆակուլտետում գործում է ուսանողների հաճախումների գրանցման և ամփոփման ծրագրային համակարգ, որի օգնությամբ ավտոմատ ձևավորվում է ուսանողների գիտելիքների գնահատման մասնակցությունների մասնաբաժնի միավորը,
5. կարիերայի կենտրոնը հավաքագրում է քանակական և որակական տվյալներ մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ:

Ուսումնառության արդյունքների և կրթության արդյունավետության գնահատման հավաստիության ու որակի բարձրացման նպատակով ԵՊՀ ԻՄ Գիտական խորհրդի և տնօրինության նիստերում պարբերաբար քննարկվում և ընդունվում են որոշումներ, որոնք վերաբերում են ուսանողների ընթացիկ և եզրափակիչ գնահատման, ամփոփիչ ատեստավորման, պրակտիկաների արդյունավետ կազմակերպման, դասախոսների փորձի փոխանակման մեխանիզմների և գործընթացների արդիականացմանն ու կատարելագործմանը և որոնք ներդրվում են ըստ մասնաճյուղի 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման հաստատված ժամանակացույցի /ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլան/: Գիտական խորհրդի որոշումները՝ հաստատվելուց հետո տեղակայվում են մասնաճյուղի վեբ–կայքում, որի շնորհիվ դառնում են արագ հասանելի բոլորին:

Մասնաճյուղում դեռևս լիարժեք ներդրված չէ որակի ամբողջական կառավարման սկզբունքը և ներքին համակարգը, սակայն համապատասխան մեխանիզմները մշակվում են, եղածները կատարելագործվում: Կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում դեռևս լիարժեք չէ իրականացված անցումը ամբողջությամբ մոդուլացված, կրեդիտային հենքով ճկուն ուսումնական ծրագրերի բակալավրի կրթական աստիճանին, ընդլայնված չէ ընտրովի դասընթացների հաշվեկշիռը, ստեղծված չեն համապատասխան պայմաններ ու մեխանիզմներ՝ ուսանողների ուսումնասիրությունը անհատական ծրագրերով կազմակերպելու համար:

ՀԱՓՈՐՈՇԻՉ Է. *ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:*

Վերլուծենք մասնաճյուղի կողմից տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը:

Մասնաճյուղը կարևորելով իր կողմից որակյալ բարձրագույն կրթության ապահովման փաստը, ուսուցման որակի նկատմամբ իր բարձր պահանջկոտությունը՝ մշակում ու կիրառում է կրթության որակի լուսաբանման, ուշադրության արժանացման և այդ մասին տեղեկատվության տարածման ժամանակակից և կատարելագործված մեթոդներ:

Մասնաճյուղում կրթության որակի ապահովման և վերահսկման համար ստեղծված է հանձնաժողով **/ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի հրամանը որակի կառավարման հանձնաժողովի ձևավորման մասին, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի որակի ապահովման և վերահսկման հանձնաժողովի կանոնակարգ/,** և այդ համակարգի գործունեությամբ սկիզբ է դրվել մասնաճյուղում տեղեկատվության կառավարման համակարգի ձևավորմանը **/ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տեղեկատվության կառավարման կենտրոնի գործունեության կանոնակարգ/**, որի նպատակն է հավաքել, մշակել և վերլուծել մասնաճյուղում ընթացող որակի գնահատման և ապահովման բոլոր գործընթացների իրականացման վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ և համապատասխան գործիքների և մեխանիզմների միջոցով իրականացնել հանրությանը օբյեկտիվ և լիարժեք տեղեկատվության տրամադրում: Կրթական

բարեփոխումներով պայմանավորված՝ անհրաժեշտության դեպքում փոխվում կամ մշակվում են հանրությանը տրամադրվող տեղեկատվության ձևն ու բովանդակությունը: Մասնաճյուղի բոլոր գործընթացների վերաբերյալ արտաքին տեղեկատվության մոնիթորինգի իրականացումը և նրա արդյունքում հավաքագրված տվյալները թույլ են տալիս բացահայտել այդ գործընթացներում առկա թերություններն ու բացթողումները:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կանոնավոր կերպով հրապարակում է տեղեկատվություն կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների, դասավանդման, ուսումնառության և գնահատման համար կիրառվող ընթացակարգերի մասին և իր տեղեկատվությունն իրականացնում է հատուկ ձեռնարկների, սկավառակների, բուկլետների, կայքերի, տարբեր ցուցահանդեսների, տարեկան հաշվետվությունների, մասնաճյուղի դասախոսների հրապարակումների և այլ փաստաթղթերի միջոցով.

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հրապարակել է իր զարգացման 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը

2. Մասնաճյուղն իր առաքելությանը համահունչ իրականացնում է նպատակաուղղված համապատասխան գործողություններ, որոնք արտահայտված են նրա կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլաններում /ՄՈՒՀ-ի առաքելությանն ու նպատակներին համապատասխան գործողությունների կարճաժամկետ պլանավորում, ՄՈՒՀ-ի առաքելությանն ու նպատակներին համապատասխան գործողությունների միջնաժամկետ պլանավորում (3 տարով)/:

3. ԵՊՀ-ն պարբերաբար հրատարակում է “Դիմորդի ուղեցույց” և լազերային սկավառակ, որոնք պարունակում են տեղեկատվություն ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆակուլտետների, մասնագիտությունների և հեռակա ուսուցման համակարգի մասին:

4. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հրատարակում է.
   - **«Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք»** բակալավրի կրթական ծրագրով սովորողների համար, որը պարունակում է օգտակար տեղեկատվություն կրեդիտային համակարգի հիմնադրույթների, ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման կարգի, առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատածավալների, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների վերաբերյալ:
   - բուկլետներ կամ ուղղակի նոր ուս.տարվա ընդունելության քննությունների ցանկ՝ ընդունելության մասնագիտությունների, քննությունների, տեղերի և վարձաչափերի մասին ***/Հավելված 1.1/:***

5. Մասնաճյուղում կազմակերպված միջոցառումները, ցուցահանդեսները, հանդիպումները լուսաբանվում են տեղական և հանրային լրատվամիջոցներով և հետուստատեսությամբ:

6. Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հրատարակվում են դասագրքեր, մենագրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, հրապարակվում են հոդվածներ և թեզիսներ, որոնց քանակը տարեցտարի ավելանում է, այդ ցանկերը ներկայացված են մասնաճյուղի ամենամյա հաշվետվություններում:

7. ԵՊՀ-ն հրատարակում է տարեկան հաշվետվություն, որտեղ առանձին բաժին կա Իջևանի մասնաճյուղի մասին:

8. Տարբեր ստորաբաժանումներ ներկայացնում են տարեկան հաշվետվություններ, իսկ տնօրենի հաշվետվությունը հրապարակվում է:

9. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մասին տեղեկատվություն և նկարագրություններ են տպագրվում “ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ”, “YEREVAN STAT UNIVERSITY”, “ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ”, “IJEVAN” տեղեկագրքերի մեջ, “Սփյուռ” տեղեկատվական կենտրոնի հրատարակած “Հայաստանի դեղին էջեր” ժողովածուում և նրանց ինտերնետ-կայքում:

10. Մասնաճյուղի Կիրառական արվեստի ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների, նրանց ստեղծագործությունների մասին տեղեկություններ են տպագրվում Իջևանի արհեստագործությունը ներկայացնող տեղեկատուներում և բուկլետներում, http:///www.ascp.am/docs/tic/ ինտերնետ-կայքում: Շուտով Ավստրիայում լույս կտեսնի “Felszeichnungen in Armenien” տեղեկատուի հերթական համարը, որտեղ առանձին բաժնով ներկայացվելու է Կիրառական արվեստի ֆակուլտետի գործունեությունը, դասախոսների և ուսանողների ստեղծագործությունները: Մասնաճյուղում տարեկան 4-5 անգամ կազմակերպվում են անհատական և խմբակային ցուցահանդեսներ, որոնց այցելում են քաղաքի արվեստասեր հասարակությունը, պատվավոր հյուրեր, քաղաքական գործիչներ:

11. Գործում է մասնաճյուղի ինտերնետային կայքը */http://www.ijevan.ysu.am/,* որը մասնաճյուղի գործունեության լուսաբանման, թափանցիկության ապահովման ամենամատչելի և ամենակարևոր միջոցներից մեկն է:

Հարկ է նշել, որ մասնաճյուղում անհրաժեշտ է ավելացնել կրթական ծրագրերի Tuning մեթոդաբանության վերաբերյալ նոր մեխանիզմների և ընթացակարգերի վրա հիմնված ձեռնարկների, մեթոդական ուղեցույցների հրատարակման հնարավորությունները, որոնք թույլ կտան կրթական ծրագրերը դարձնել հանրության /ներքին և արտաքին շահակիցների/ քննարկման նյութ և պայմաններ կստեղծեն գործող կրթական ծրագրերի նորովի վերանայման և բարելավման, մասնաճյուղում նոր մասնագիտությունների ստեղծման համար:

Չափանիշ 2-ի վերաբերյալ ներկայացնենք SWOT վերլուծություն վերջին 3 տարվա համար:

Ուժեղ կողմեր (Strengths)	Հնարավորություններ (Opportunities)
1. Մասնաճյուղի կառավարման մարմինները գործում են հստակ կանոնակարգերով և աշխատակարգերով 2. Վարչական աշխատակազմի փոքրաթիվությունը և արդյունավետ տեղաբաշխումը 3. Մասնաճյուղի ՌԾ-ին համապատասխան միջնաժամկետ և կարճաժամկետ պլան-ժամանակացույցերի առկայություն 4. Ներքին շահակիցների, ՈՒԳԸ և ՈՒԽ մասնակցությունը մասնաճյուղի կառավարման, գործունեության գնահատման և որակի ապահովման գործընթացներին 5. Փորձառու և կայուն վարչական անձնակազմի առկայություն 6. Հասարակության հետ կապերի և մամուլի պատասխանատուի առկայությունը 7. Մինչհամալսարանական կրթության և մասնագիտական կողմնորոշման բաժնի առկայությունը 8. Մասնաճյուղում ներքին համակարգչային ցանցի և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության առկայություն 9. Կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղղորդված քաղաքականությունը 10.Որակի ապահովման քաղաքականության առկայությունը	1.ԵՊՀ և այլ առաջատար ՄՈՒՀ-երի հետ փորձի փոխանակման ակտիվացում (բենչմարքինգ) 2.Որակի ապահովման ազգային կենտրոնի հետ համագործակցությունը 3.Արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ակտիվացում 4.Արտաքին շահակիցների մասնակցության ակտիվացում մասնաճյուղի կառավարման գործընթացներին

Թույլ կողմեր (Weaknesses)	Վտանգներ (Threats)
1. Մասնաճյուղի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի անկատարությունը 2. Վարչական ենթակառուցվածքների տարածքային ռեսուրսներով ոչ բավարար ապահովվածությունը 3. Կառավարման մարմինների հաշվետվությունների վերլուծությունների և գնահատման մեխանիզմների անկատարություն 4. Հեռակա ուսուցման համակարգի ուսանողների ներգրավվածության պակասը մասնաճյուղի կառավարման, գործունեության գնահատման և որակի ապահովման գործընթացներում 5. Գործընթացների մշտադիտարկման քաղաքականության և ընթացակարգերի հստակ մեխանիզմների բացակայություն 6. Որակի ապահովման նոր չափանիշների վերաբերյալ ոչ լիարժեք տեղեկացվածությունը 7. Հետադարձ կապի ապահովման մեխանիզմների անկատարություն 8. ԵՊՀ և այլ առաջատար ՄՈՒՀ-երի հետ փորձի փոխանակման ցածր մակարդակ 9. Ուսանողների հարցումների արդյունքների ոչ լիարժեք արձագանքը	1. Դեմոգրաֆիական փոփոխությունները տարածաշրջանում 2. Ֆինասնական մուտքերի անբավարարություն 3. Կրթության ոլորտում օրենսդրական դաշտի հաճախակի փոփոխությունները 4. Նոր մասնաշենքի կառուցման համար լրացուցիչ ֆինանսական միջոցների բացակայություն 5. Ֆորս-մաժոր

Մասնաճյուղի արդյունավետ կառավարումը և վարչարարությունը ուսումնական, հետազոտական և այլ գործընթացների արդյունավետ կազմակերպման նախապայմանն է, որի ապահովման համար մասնաճյուղը նախատեսում է իրականացնել հետևյալ գործընթացները.

- մասնաճյուղի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի շարունակական բարելավում,
- մասնաճյուղի գործունեությունը գնահատող չափորոշիչների և ցուցիչների վերանայումը, դրանց համապատասխանեցումը ռազմավարական ծրագրի խնդիրներին,
- կառավարման և վարչարարության ոլորտում հաջողությունների հասած այլ ՄՈՒՀ-երի փորձի ուսումնասիրությունը, դրանց կիրառումն ու վերլուծությունները /բենչմարքինգ/: